

կուցումներէն թէ Դուք եւ Ձեր ժողովուրդը ունիք հանդէպ Ս. Աթոռին բարեացակամ վերաբերմունք: Նորին Սրբութիւնը ասկէ մեծ մխիթարութիւն զգաց եւ անշափ շնորհակալ է. կը մաղթէ որ թէ Դուք եւ թէ Ձեր ժողովուրդը նոյնին մէջ յարատեւէք եւ աճեցնէք նոյն տրամադրութիւնը, որպէս զի համապատասխանած ըլլաք միշտ անոր հայրական սիրոյն եւ մասնաւոր բարեացակամութեան:

Նկատմամբ կրօնի հայող կէտերուն, որոնց մասին Նորին Սրբութիւնը համառօտապիւր մը գրեց առ Տէր արքեպիսկոպոսն Մովսէս, միաժամանակ առ Ձեզ եւ առ Արիստակէս վարդապետ, պիտի չուզեմ ըսել Ձեզ աւելի բան մը, քան զոր խնդրեց Ձեզմէ անշափ սիրով Նորին Սրբութիւնը, քաջ տեղեակ ըլլալով թէ Դուք, ինչպէս եւ յիշեալ Արքեպիսկոպոսն եւ Արիստակէս վարդապետ, ունիք զիտութիւնն եւ ճոխութիւնը գործելու ի միասին այնպիսի կերպով մը, որ ի գլուխ ելլէ այն միտքիւնը, զոր Հայ եպիսկոպոսները Փլորենտեան սուրբ եւ տիեզերական ժողովին մէջ Նւզինիոս Դ. քահանայապետի՝ Նորին Նախորդին հետ կայացուցած էին: Այս առանց տարակուսի Նորին Սրբութեան մեծ հաճոյք պիտի պատճառէ, որուն չտախպանց մեծ ցաւ եղաւ այն, որ Ձ. Տ. անցեալ տարի Լեհաստան եկած ըլլալով չէր կրցած իւր ճանապարհորդութիւնը մինչեւ Հոռոմ շարունակել. որպէս զի կարենար տեսնել սիրով եւ ըստ արժանւոյն պատուէր. նաեւ հնարաւոր պիտի ըլլար Լէսպոլ-